ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍԵՒԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ

Մարկոսի Ավետարանի հարցական նախադասությունները մենք ուսումնասիրել ենք ըստ արեւելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար փալիս ենք նաեւ գրաբարի տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արեւելահայերենի հարցումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994 թ. հրատարակած Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997 թ. հրատարակածից:

Մարկոսի եւ՛ աշխարհաբար, եւ՛ գրաբար Ավետարանում կա 100 հարցական նախադասություն, ընդ որում աշխարհաբարյան երկու հարցման դիմաց գրաբարյանը ունի պատմողական նախադասություն, իսկ գրաբարյան մեկ հարցման դիմաց աշխարհաբարյանը ունի պատմողական նախադասություն, մյուս կողմից գրաբարյան երկու հարցումները աշխարհաբարյանում արտահայտված են մեկ հարցական նախադասությամբ: Բերենք այդ նախադասությունները՝ «Արդ, արթո՛ւն կացէք, որովհետեւ չգիտէք, թէ տանտէրը երբ կըգայ՝ երեկոյեա՞ն, թէ՞ կէսգիշերին, աքլորականչի՞ն, թէ առաւօտեան դէմ - Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեա՛յ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտն» (ԺԳ 35): Եւ նրան ուշադրութեամբ դիտում էին՝ տեսնելու, թէ շաբաթ օրով նրան կը բժշկի՞, որպէսզի ամբաստանեն նրան - Եւ սպասէին նմա եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ (Դ 2), «Եւ նոքա զբանն ի մտի ունէին, եւ խնդրէին ընդ միմեանս թէ զի՞նչ իցէ ի մեռելոցն յառնել – Նրանք այս խօսքը իրենց մտքում պահում էին եւ միմյանց հարցնում էին, թէ ի՞նչ է մեռելներից յարուրիւն առնելը» (Թ 9), Եւ ասէ ցնոսա Յիսուս, ո՞չ երբեք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղեւ, եւ քաղցեաւ նա եւ որ ընդ նմայն էին: Զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, եւ զհացսն զառաջաւորութեան եկեր, եւ եւ տուեալ եւ այնոցիկ որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն – Յիսուս նրանց ասաց. «Դուք երբեւիցէ չէ՞ք կարդացել, թէ ինչ արեց Դաւիթը, երբ կարիք ունեցաւ եւ քաղց զգաց ինքը եւ նրանք, որ իր հետ էին. թէ ինչպէս Աբիաթար քահանայապետի օրով մտաւ Աստծու տունը եւ կերաւ առաջաւորութեան հացը՝ տալով նաեւ նրանց, որ իր հետ էին. մի բան, որ, բացի քահանաներից, ուրիշների համար օրինաւոր չէր ուտել» (Ռ 25-26):

Ինչպես Մատթէոսի, այնպես էլ Մարկոսի Ավետարանում հանդես են գալիս տարբեր

տեսակի հարցական նախադասություններ: Ինչու-որ հարցումները քանակով բոլորից շատ են: Միայն մեկ հարցում պարունակող կամ մենաբեւեռ ինչու-որ հարցումները 53 հատ են: 9-ը բաղկացած են երկու ինչու-որ հարցումներից, իսկ 7-ը մի կողմից ինչու-որ հարցումներից, մյուս կողմից էլ **այո-ոչ** եւ ընտրանքային հարցումներից, եւ մեկն էլ հանդես է գալիս արդեօք-ով կազմված միեւնույն եղանակիշ հարցման մեջ: Այսպիսով, ընդհանուր առմամբ Մարկոսի Ավետարանում կա 80 ինչու-որ հարցում, հետո գալիս են **այո-ոչ**-երը՝ ընդհանուր առմամբ՝ 37 հատ, հետո՝ եղանակիչները՝ ընդհանուր առմամբ՝ 6 հատ, իսկ վերջում ընտրանքայինները՝ ընդհանուր առմամբ 5 հատ:

Մարկոսի Ավետարանում նույնպես հարցեր են տալիս Հիսուս, Նրա աշակերտները, ժողովուրդը, փարիսեցիները, օրենսգետները, Պիղատոսը եւ ուրիշներ: Այստեղ դարձյալ բոլորից շատ հարցեր տալիս է Հիսուս:

Մատթէոսի Ավետարանի պես Մարկոսի Ավետարանում էլ հիմնականում սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, եւ նոր չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այդ խոսքը այստեղ նույնպես հանդես է գալիս կարճ՝ բաղկացած երկու-երեք բառերից, ինչպես՝ «Եւ նրանց ասաց - Եւ ասէ ցնոսա» (Դ 21), «Եւ նրան հարցրեց - Եւ հարցանէր ցնա» (Ե 9), «Ասաց նրանց - Ասէ ցնոսա» (Զ 38), «Եւ նա նրանց ասաց - Եւ ասէ ցնոսա» (Ը 21) եւ շատ ավելի երկար՝ անգամ բաղկացած երկու եւ երեք նախադասություններից, ինչպես՝ «Իսկ օրէնսգէտներն ու փարիսեցիները երբ տեսան, որ նա մաքսաւորների եւ մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին – Իսկ դպիրքն եւ փարիսեցիք իբրեւ տեսին թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտսն նորա» (Բ 16), «Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առակներով էր խօսում նրանց հետ - Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ առակօք խօսէր ընդ նոսա» (Գ 23), «Եւ երբ ասացին նրան՝ ահա՛ւասիկ քո մայրն ու քո եղբայրները դրսում են եւ քեզ են ուզում, նրանց ասաց - Եւ իբրեւ ասացին ցնա, Ահաւասիկ մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ եւ խնդրեն զքեզ, պատասխանի եւ նոցա եւ ասէ» (Գ 32-33), «Եւ Յիսուս իսկոյն ինքն իր մէջ իմանալով իրենից դուրս եկած զօրութիւնը, դարձաւ դէպի ամբոխը եւ ասաց - Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զօրութիւնն որ ել ի նմանէ, դարձաւ յամբոխն եւ ասէ» (Ե 30), «Եւ Յիսուս իր աշակերտների հետ միասին եկաւ գնաց Փիլիպպեան Կեսարիայի գիւղերը. եւ ճանապարհին աշակերտներին հարցնում էր եւ ասում - Եւ էլ Յիսուս աշակերտօքն հանդերձ ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ, եւ ի ճանապարհին հարցարկէր ցաշակերտսն եւ ասէր» (Ը 27):

Մարկոսի Ավետարանում նույնպես հարցումներ են կազմված համարյա բոլոր հարցական դերանուններով, ինչպես՝ **ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, քանի՞, ո՞ւր, ո՞ւմ, ո՞ր, որտեղի՞ց, ինչքա՞ն, ինչո՞վ եւ ինչի՞** մասին: Մենաբեւեռների մեջ բոլորից շատ հանդիպում են **ի՞նչ**-ով կազմվածները՝ 15 անգամ, **ինչո՞ւ**-ով կազմվածները՝ 14 անգամ, հետո՝ **ո՞վ**-ով կազմվածները՝ 7 անգամ, հետո՝ **ինչպե՞ս**-ով կազմվածները՝ 5 անգամ, ապա մյուսներով՝ 1-3 անգամներ: Մարկոսի Ավետարանում նույնպես մի շարք հարցական դերանուններ հանդես են գալիս երկբեւեռ եւ եռաբեւեռ հարցական նախադասությունների մեջ, եւ նրանց քանակն ավելի է շատանում: Այս պատճառով **ի՞նչ**-ով կազմված հարցումների քանակը զգալի շատանում է եւ դառնում ընդհանուր թվով 27 հատ, հետո նոր գալիս են **ինչո՞ւ**-ով կազմվածները՝ ընդհանուր թվով 18 հատ, հետո՝ **ո՞վ**-ով կազմվածները՝ ընդհանուր թվով 11 հատ եւ այլն:

Այժմ ներկայացնենք մենաբեւեռ **ինչու-որ** հարցական նախադասությունները՝ ըստ

հարցական դերանվան քանակի շատության՝ նշելով երկբեւեռ եւ եռաբեւեռ հարցումների միայն համարները:

«Ի՞նչ» հարցական դերանունով հարցումներ

Ինչպես վերը նշեցինք, «ինչ» հարցական դերանունով մենաբեւեռ հարցական նախադասությունները Մարկոսի Ավետարանում բոլորից շատ են՝ 16-ը, իսկ 12-ն էլ պարունակում են մեկից ավելի հարցումներ: Այս 12-ից փասի դեպքում ինչ-ը հանդես է գալիս **ո՞վ** (Բ 6-7, Ը 27, Ը 29, ԺԱ 27-28), **ի՞նչ** (Թ 34, 36-37), ինչո՞ւ (ԺԱ 5), **ե՞րբ** (ԺԳ 3-4), **ինչի՞** (Դ 30-32), **որտեղի՞ց** (Զ 2) հարցական դերանուններով կազմված հարցումների հետ, մեկի դեպքում՝ **այո-ոչ** հարցման հետ (Ա 23-24) եւ մեկի դեպքում ընտրանքայինի հետ (Գ 4): Փաստորեն, ինչպես արդեն ասել ենք **ի՞նչ**-ով կազմված հարցումների քանակը Մարկոսի Ավետարանում բոլորից շատ է՝ ընդհանուր հաշվով 28-ը: Ասենք, որ աշխարհաբարյան **ի՞նչ** դերանունը գրաբար տարբերակում հանդես է գալիս մեծ մասամբ **զի՞նչ** հարցական դերանվան եւ մեկերկու դեպքերում էլ **զի՞** հարցակիր բառի միջոցով:

Այժմ դիտարկենք «ինչ» հարցական դերանունով կազմված մենաբեւեռ հարցական նախադասությունները, որոնք ինչպես պարզ կառուցվածքի են, այնպես էլ բարդ՝ արտահայտելով տարբեր ստորադասական եւ համադասական հարաբերություններ:

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1. Եւ նրան հարցրեց. «Անունդ ինչ է» - Եւ հարցանէր ցնա թէ Զինչ անուն է քո» (Ե 9):

2. Աղջիկը դուրս գնալով իր մօրն ասաց՝ ինչ ուզեմ – Նա ելեալ ասէ ցմայր իւր, Զինչ խնդրեցից (Զ 24):

3. Նա պատասխան տուեց նրանց եւ ասաց. «Մովսէսը ձեզ ինչ պատուիրեց» - Նա պատասխանի եւ նոցա եւ ասէ. Զինչ պատուիրեաց ձեզ Մովսէս (Ժ 3): Այդպես եւ՝ ԺԴ 63, ԺԵ 14:

բ) Եզակաս կոչականով պարզ հարցում.

1. Երբ նա Յիսուսին հեռուից տեսաւ, առաջ վազեց ու երկրպագեց նրան. բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ինչ ես ուզում ինձնից, Յիսուս, բարձրեալ Աստծո՛ Որդի: ...» - Իբրեւ եւրես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ եւ երկիր եպագ նմա: Աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ, Զի՞ կայ իմ եւ քո, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ (Ե 6-7):

գ) Բարդ ստորադասական հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է.

1. Եւ նա նրանց ասաց. «Ինչ էք կամենում ինձնից, որ անեմ ձեզ համար» - Եւ նա ասէ ցնոսա, Զինչ կամիք յինէն զի արարից ձեզ (Ժ 36):

2. Յիսուս նրան ասաց. «Ինչ ես ուզում, որ քեզ անեմ» - Պատասխանի եւ նմա Յիսուս եւ ասէ, Զինչ կամիս թէ արարից քեզ (Ժ 51):

3. Պիղատոսը դարձեալ խօսք առաւ եւ ասաց նրանց. «Իսկ ինչ էք ուզում, որ անեմ հրեաների արքային» - Դարձեալ պատասխանի եւ Պիղատոս եւ ասէ ցնոսա, Իսկ զինչ կամիք թէ արարից զարքայն Հրէից (ԺԵ 12):

4. Երբ նա այնտեղից ճանապարհ ընկաւ, ահա մեծահարուստ մեկը առաջ վազելով ծնկի իջաւ, հարցրեց նրան ու ասաց. «Բարի՛ Վարդապետ, ինչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ» - Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր, հարցանէր ցնա եւ ասէր, Վարդապետ բարի, զինչ արարից զի կեանս յաւիտենականս ժառանգեցից (Ժ 17):

դ) Ենթասպառդաս հարցական նախադասություն.

1. Ապա հարցրին նրան ու ասացին. «Այն ի՞նչ է, որ օրէնսգէտներն ասում են, թէ նախ Եղիան պէտք է գայ» - Հարցին ցնա եւ ասեն, Ձի՞նչ է այն զոր դպիրքն ասեն եթէ նախ Եղիայի պարտ է գալ (Թ 10):

ե) Սպառդասական եւ համադասական հարաբերությամբ բարդ հարցական նախադասություն.

1. Եւ ամէնքը զարմացան, այնպէս որ հարցնում էին իրար եւ ասում. «Այն ի՞նչ նոր վարդապետութիւն է, որ իշխանութեամբ պիղծ ոգիներին էլ է սաստում, եւ նրանք հնազանդում են նրան» - Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հոծել ընդ միմեանս եւ ասել, Ձի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաստ է, եւ հնազանդին սմա (Ա 27):

զ) Համադասական հարաբերությամբ հարցական նախադասություններ, որոնցից երկրորդը ունի առաջադաս կոչական.

1. Մինչ Յիսուս այս բանն էր խօսում, ժողովրդապետի տնից ոմանք եկան եւ ասացին. «Քո դուստրը մեռաւ, էլ ի՞նչ ես նեղութիւն տալիս Վարդապետին» - Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ի տանէ ժողովրդապետին եւ ասեն թէ դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ (Ե 35):

2.Նա պատասխանեց եւ ասաց նրան. «Վարդապե՛տ, այդ բոլորը իմ մանկութիւնից ի վեր արել եմ. արդ, ի՞նչ եմ պակաս թողել» - Նա պատասխանի եւ ասէ ցնա, Վարդապետ, զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ, արդ զի՞նչ եւս պակասիցեմ (Ժ 20):

է) Երբ հարցումը եւ նրան տրվող պատասխանը բերվում է միասնաբար.

1. Եւ սկսեց նրանց հետ առակներով խօսել եւ ասել. «.... Արդ, այգու տէրը ի՞նչ կ՚անի. կը գայ եւ կը սպանի մշակներին ու այգին ուրիշների ձեռքը կը յանձնի: ...» - Արդ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն, եւ տացէ զայգին ի ձեռս այլոց (Բ 1, 9):

«Ինչո՞ւ» հարցական դերանունով հարցումներ

Ինչպես ասացինք, Մարկոսի Ավետարանում **ինչո՞ւ** հարցական դերանունով կա 14 մենաբեւեռ հարցական նախադասություն՝ չորսն էլ հանդես են գալիս այլ տիպի հարցումների հետ՝ մեկը՝ մեկ այո-ոչ հարցման հետ (Դ 40), մեկը երեք այո-ոչ հարցման հետ (Ը 17), մեկը՝ **ինչու-որ**-ի հետ (ԺԱ 5) եւ մեկն էլ՝ ընտրանքայինի հետ (Բ 8-9): Այսպիսով, **ինչո՞ւ**-ով կազմված հարցումների թիվը հասնում է 18-ի: Աշխարհաբարյան **ինչո՞ւ** հարցական դերանունը գրաբար տարբերակում հիմնականում հանդես է գալիս **ընդէ՞ր** եւ **զի՞** ու մի անգամ էլ **զիա՞րդ** հարցակիր բառերի միջոցով: Այս հարցումները կառուցվածքով լինում են ինչպես պարզ, այնպես էլ բարդ: Պարզերը հանդես են գալիս առանձին եւ առաջադաս կոչականով:

ա) Պարզ հարցումներ, որոնցից վերջինը առաջադաս կոչականով է.

1. Եւ երբ Յիսուս տուն մտաւ, աշակերտները, առանձին, հարցրին նրան. «Ինչո՞ւ մենք չկարողացանք հանել դրան» - Եւ իբրեւ եմուտ նա ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա, Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա (Թ 27):

2. Իսկ օրէնսգէտներն ու փարիսեցիները երբ տեսան, որ նա մաքսաւորների եւ մեղաւորների հետ է ուտում, նրա աշակերտներին ասացին. «Ինչո՞ւ էք մեղաւորների հետ ուտում եւ խմում» - Իսկ դպիրքն եւ փարիսեցիք իբրեւ տեսին թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտսն նորա, Զի՞ է զի ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ուտէ եւ ըմպէ (Բ 16):

3. Եւ ժամը երեքին Յիսուս բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «.... Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ: ...» – Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, ... Աստուած իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս (ԺԵ 34):

բ) Բարդ համադասական հարցական նախադասություններ.

1. Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ էին պահում. եկան եւ նրան ասացին. «Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտները եւ փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում» – Եւ էին աշակերտքն Յովհաննու եւ փարիսեցիքն ի պահս. գան եւ ասեն ցնա, ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքդ ոչ պահեն (Բ 18):

2. Ապա ներս մտնելով՝ նրանց ասաց. «Ինչո՞ւ էք խռովուած ու լաց էք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է» - Եւ մտեալ ի ներքս ասէ ցնոսա, Զի՞ խռովեալ էք եւ լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ (Ե 39): Նաեւ՝ Է 5, ԺԴ 4:

գ) Համադասական եւ ստորադասական հարաբերություն արտահայտող հարցումներ.

1. Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Եղիան նախ պիտի գայ եւ ամէն բան կարգի պիտի դնի. իսկ ինչո՞ւ մարդու Որդու մասին գրուած է, որ շատ չարչարանքներ պիտի կրի ու անարգուի» , Նա պատասխանի եւ նոցա եւ ասէ, Եղիա նախ եկեալ յարդարեսցէ զամենայն. իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ, զի բազում ինչ չարչարեսցի եւ անգոսնեսցի (Թ 11):

2. Նրանք իրար միջեւ խորհում էին ու ասում. «Եթէ ասենք՝ երկնքից, մեզ կ՛ասի՝ իսկ ինչո՞ւ նրան չհաւատացիք. իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից ենք վախենում», որոհետեւ բոլորը գիտէին, թէ Յովհաննէսը մարգարէ էր» - Խորհէին ընդ միմեանս եւ ասէին, Եթէ ասեմք եթէ յերկնից, ասէ ցմեզ, Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. Այլ եթէ ասեմք, Ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն, զի ամենեքին գիտէին զՅովհաննէս թէ մարգարէ էր (ԺԱ 31-32):

3. Յիսուս իմացաւ նրանց կեղծաւորութիւնը եւ ասաց. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորնե՛ր. ինձ մի դահեկան բերէք, որ տեսնեմ» - Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա, Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից (ԺԲ 15):

4. Եւ Յիսուս նրանց ասաց. «Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նեղութիւն տալիս, որովհետեւ ինձ համար մի բարի գործ արեց: ...» - Եւ Յիսուս ասէ ցնոսա, թոյլ տուք դմա, զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս (ԺԴ 6):

գ) Երբ հարցումը եւ նրան տրվող պատասխանը բերվում է միասնաբար.

1. Եւ նա իր հոգում զայրացաւ եւ ասաց. «Ինչո՞ւ է այս սերունդը նշան ուզում. ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերնդին նշան չի տրուի» - Եւ զայրացաւ յոգի իւր եւ ասէ, Զի՞ է զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ թէ տացի նշան ազգիս այսմիկ (Ը 12):

2. Եւ Յիսուս նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարի կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստուած: ...» - Եւ Յիսուս ասէ ցնա, Զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի բայց մի Աստուած (Ժ 18):

3. Եւ եթէ մէկը ձեզ ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք արձակում», կ՛ասէք. «Տիրոջը պէտք է». եւ նա իսկոյն դրան այստեղ կ՛ուղարկի» - Եւ եթէ ոք ասասցէ ձեզ եթէ Զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք եթէ Տեառն իւրում պիտոյ է. եւ վաղվաղակի առաքեսցէ զնա այսր (ԺԱ 3):

«Ո՞վ» հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում **ո՞վ** հարցական դերանունով կա 7 մենաբեւեռ հարցական

նախադասություն, չորսն էլ հանդես են գալիս այլ ինչու-որ հարցումների հետ մեկտեղ (Բ 6-7, Ը 27, Ը 29, ԺԱ 27-28): Աշխարհաբարյան **ո՞վ** հարցական դերանունը գրաբարյան տարբերակում մեծամասամբ արտահայտված է դարձյալ ո՞վ, իսկ միայն մեկ դեպքում **ո՞ ոք** հարցական դերանվան միջոցով: Այս Ավետարանում **ո՞վ** հարցական դերանունով կան պարզ եւ բարդ հարցական նախադասություններ:

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1. Եւ Յիսուս իսկոյն ինքն իր մէջ իմանալով իրենից դուրս ելած զօրութիւնը, դարձաւ դէպի ամբոխը եւ ասաց. «Ո՞վ դիպաւ իմ զգեստներին» - Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ի նմանէ, դարձաւ յամբոխն եւ ասէ, ո՞վ մերձեցաւ ի հանդերձս իմ (Ե 30):

2. Եւ աշակերտները առաւել եւս էին զարմանում ու միմեանց ասում. «Ապա ուրեմն ո՞վ կարող է փրկուել» - Եւ նոքա առաւել եւս զարմանային եւ ասէին ընդ միմեանս, Իսկ ո՞վ կարասցէ ապրել (Ժ 26): Ինչպես եւ՝ ԺԶ 3, Գ 33:

բ) Ենթասպորդաս հարցում.

1. Եւ ոմանք սկսեցին թքել նրա երեսին, շորով գլուխը ծածկել, բռունցքով խփել ու ասել. «Մարգարէացի՛ր մեզ, Քրիստո՛ս, այն ո՞վ է, որ քեզ խփեց» - Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել, կռփել եւ ասել, Մարգարեաց մեզ, Քրիստոս, ո՞վ է այն որ եհարն զքեզ (ԺԴ 65):

գ) Երկու սպորդաս նախադասություններով հարցում, որոնք իրար նկատմամբ գտնվում են համադասական հարաբերության մեջ.

1. Եւ աշակերտները նրան ասացին. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ, եւ ասում ես, թէ՝ ո՞վ դիպաւ իմ զգեստներին» - Եւ ասեն ցնա աշակերտքն, Տեսանես զի ամբոխդ նեղէ զքեզ, եւ ասես թէ ո՞վ մերձեցաւ ի հանդերձս իմ (Ե 31):

«Ինչպէ՞ս» հարցական դերանունով հարցումներ

Մարկոսի Ավետարանում կա **ինչպէ՞ս** հարցական դերանունով 5 մենաբեւեռ հարցական նախադասություն, մեկն էլ հանդես է գալիս այո-ոչ հարցման հետ (Դ 13), այսինքն՝ ընդհանուր առմամբ 6 հարցում: Աշխարհաբարյան **ինչպէ՞ս** հարցական դերանունը գրաբարյան տարբերակում արտահայտված է զիա՞րդ հարցական բառով: Նշված Ավետարանում **ինչպէ՞ս** հարցական դերանունով կան պարզ եւ բարդ հարցական նախադասություններ:

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1. Եւ նա նրանց ասաց. «Ապա ուրեմն ինչպէ՞ս չէք հասկանում» - Եւ ասէ ցնոսա, Իսկ զիա՞րդ ոչ իմանայք (Ը 21):

2. Եւ նա իր մօտ կանչելով նրանց՝ առակներով էր խօսում նրանց հետ. «Ինչպէ՞ս կարող է սատանան սատանային դուրս հանել: ...» - Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ առակօք խօսէր ընդ նոսա, Զիա՞րդ կարէ Սատանայ զսատանայ հանել (Գ 23):

բ) Բարդ սպորդասական հարցում.

1. Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «.... Արդ, եթէ Դաւիթն ինքն իսկ նրան Տէր է կոչում, ինչպե՞ս նրա Որդին կը լինի» - Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, մինչ ուսուցանէր իտաճարին .... Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ ելցէ որդի նորա (ԺԲ 37):

գ) Բարդ համադասական հարցում.

1. Եւ քահանայապետը իսկոյն պատռեց իր պատմուճանը եւ ասաց. «.... Ահա ամէնքդ դրա բերանից լսեցիք հայհոյութիւնը. ձեզ ինչպէ՞ս է թւում ...» - Ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն ի բերանոյ դորա, զիա՞րդ թուի ձեզ (ԺԴ 64):

դ) Տարակառուցվածք հարցական նախադասություն.

1. Մինչ Յիսուս ուսուցանում էր տաճարում, հարց տուեց ժողովրդին ու ասաց. «Ինչպէ՞ս են ասում օրէնսգէտները, թէ Քրիստոս Դաւթի Որդի է, մինչ Դաւիթն ինքն Սուրբ Հոգով ասում է՝ Տէրն իմ Տիրոջն ասաց. նստի՛ր իմ աջում, մինչեւ որ քո թշնամիներին քո ոտքերի համար պատուանդան դնեմ: ...» - Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ, մինչ ուսուցանէր ի տաճարին, Զիա՞րդ. ասեն դպիրքն թէ Քրիստոսն որդի Դաւթի է: Եւ ինքն Դաւիթ Հոգովն Սրբով ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմե իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց (ԺԲ 35-36):

«Քանի՞» հարցական դերանունով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում **քանի՞** հարցական դերանունով կա 3 մենաբեւեռ հարցական նախադասություն, իսկ մեկն էլ հանդես է գալիս չորս այո-ոչ հարցում պարունակող հնգաբեւեռ հարցման մեջ (Ը 17, 18-19): Այս հարցումները զրաբար տարբերակում աշխարհաբարյանի նման արտահայտված են **քանի՞** հարցական դերանվան միջոցով: **Քանի՞**-ով կազմված 3 հարցումներից մեկը պարզ կառուցվածքի է, երկուսը՝ բարդ:

ա) Պարզ կառուցվածքի հարցում.

1. Եւ նա հարցրեց նրանց. «Քանի՞ նկանակ ունեք» - Եւ հարցանէր զնոսա, Քանի՞ նկանակ հաց ունիք (Ը 5):

բ) Բարդ ստորադասական հարցումներ.

1. Յիսուս իմացաւ նրանց խորհուրդը եւ նրանց ասաց. «.... Եւ երբ եօթը նկանակը չորս հազար հոգու բաժանեցի, կտորտանքների քանի՞ զամբիւղ լիքը վերցրիք» - Դիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա, ... Եւ յորժամ զեւթն նկանակն ի չորս հազարսն, քանի՞ զամբիղ լի բարձէք զկոտորոցն (Ը 17, 20):

2. Ասաց նրանց. «Քանի՞ նկանակ ունէք, գնացէ՛ք տեսէք» - Ասէ ցնոսա, Քանի՞ նկանակ ունիք, երթայք տեսէք (Զ 38):

«Ո՞ւր» եւ «ո՞ւմ» հարցական դերանուններով հարցումներ

Մարկոսի Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կան երկուական հարցական նախադասություն: «Ո՞ւր»-ով հարցումները բարդ ստորադասական են, իսկ «ո՞ւմ»-ովներից մեկը պարզ է, մյուսը՝ բարդ ստորադասական: «Ո՞ւր» հարցական դերանվանը զրաբար տարբերակում համապատասխանում է դարձյալ **ո՞ւր**-ը, իսկ **ո՞ւմ** դերանվանը՝ **ո՞յր**-ը: Բերենք այդ հարցական նախադասությունները:

ա) «Ո՞ւր»-ով բարդ ստորադասական հարցումներ, որոնցից երկրորդը՝ ենթաստորադաս է.

1. Եւ բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ զատկի գառն էին մորթում, աշակերտները նրան ասացին. «Ո՞ւր ես ուզում գնանք պատրաստենք, որ զատկական ընթրիքն ուտես» - Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն, ո՞ւր կամիս, երթիցուք պատրաստեսցուք զի կերիցես զզատիկն (ԺԴ 12):

2. Եւ նա ո՛ր տունը որ մտնի, տանտիրոջը կ՛ասէք. «Վարդապետն ասում է՝ ո՞ւր է այն

իջեւանը, ուր իմ աշակերտների հետ զատկական ընթրիքը պիտ ուտեմ» - Եւ յոր տուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն, Վարդապետ ասէ, ո՞ւր են իջեւանքն ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն (ԺԴ 14):

բ) «Ո՞ւմ»-ով պարզ հարցում.

Եւ նրանց ասաց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը» - եւ ասէ ցնոսա, ո՞յր է պատկերս այս կամ գիր (ԺԲ 16):

գ) «Ո՞ւմ»-ով բարդ ստորադասական հարցում.

1. Նրա մօտ եկան սադուկեցիները, որոնք ասում են, թէ յարութիւն չկայ. հարց էին տալիս եւ ասում. «.... Արդ, յարութեան ժամանակ, երբ յարութիւն առնեն, նրանցից ո՞ւմ կինը կը լինի. քանի որ եօթն էլ նրան կին առան» - Գան առ նա սադուկեցիքն որ ասեն թէ Չիք յարութիւն. հարցանէին ցնա եւ ասէին, ... Արդ ի յարութեանն յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն, զի եւթնեքեան կալան զնա կին (ԺԲ 18, 23):

«Ո՞ր», «ինչքան» եւ «որտեղի՞ց» հարցական դերանուններով հարցումներ

Դիտարկվող Ավետարանում նշված հարցական դերանուններից յուրաքանչյուրով կա մեկական մենաբեւեռ հարցական նախադասություն. միայն <u>ո՞ր</u>-ը հանդես է գալիս նաեւ ընտրանքային հարցման հետ (Բ 8-9), իսկ «որտեղի՞ց»-ը «ի՞նչ»-ով կազմված հարցման հետ (Զ 2): Դրանցից երկուսը պարզ կառուցվածքի են, մեկը բարդ: Ո՞ր հարցական դերանունը գրաբար տարբերակում արտահայտված է հենց **ո՞ր**-ով, **ինչքա՞ն**-ը՝ **քանի՞**-ով, **որտեղի՞ց**-ը՝ **ուստի՞**-ով:

Բերենք այդ հարցական նախադասությունները.

1. Օրէնսգէտներից մէկը, մօտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին. երբ նա տեսաւ, թէ Յիսուս նրանց պատասխանը լաւ տուեց, հարցրեց նրան եւ ասաց. «Ո՞ր պատուիրանն է առաջինը» - Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն լսէր նոցա մինչ վիճէին. իբրեւ եղես թէ բարւոք եր նոցա զպատասխանին, եհարց ցնա եւ ասէ, ո՞ր պատուիրան է առաջին (ԺԲ 28):

2. Յիսուս հարցրեց նրա հօրը եւ ասաց. «Ինչքա՞ն ժամանակ է անցել այն օրուանից, ինչ այդ նրան պատահել է» - Եհարց ցհայր նորա եւ ասէ, Քանի՞ ժամանակք են յորմէ հետէ այդ եղեւ դմա Թ 20):

Աշակերտները նրան պատասխանեցին եւ ասացին. «Որտեղի՞ց կարող ես նրանց հացով կշտացնել այս ամայի վայրում» - Պատասխանի եղուն նմա աշակերտքն նորա, ուստի՞ կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի ասէ (Ը 4):

«Ինչո՞վ» եւ «ինչի՞ մասին» կապակցությամբ հարցումներ

Մարկոսի Ավետարանում «ինչո՞վ» հարցական դերանունով կա միայն մեկ հարցում, իսկ «ինչի՞ մասին» կապակցությամբ՝ երկու: Վերջինով արտահայտված հարցումները պարզ կառուցվածքի են, իսկ «ինչո՞վ» հարցական դերանունովը՝ բազմաբարդ: **Ինչո՞վ** հարցական դերանունը Ավետարանի գրաբար տարբերակում արտահայտված է **ի՞ւ**-ով, իսկ **ինչի՞ մասին** կապակցությունը՝ **զի՞նչ** հարցական դերանունով:

Ահա այդ հարցումները.

1. Յիսուս աշակերտներին հարցրեց. «Ինչի՞ մասին էիք վիճում նրանց հետ» - Եւ եհարց ցնոսա թէ Զի՞նչ վիճէիք ընդ նոսա (Թ, 15):

2. Եկաւ Կափառնայում եւ, երբ տուն մտաւ, աշակերտներին հարցրեց. «Ճանապարհին

իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում» - Եկն ի Կապառնայում, եւ իբրեւ եմուտ ի տուն, հարցանէր զնոսա, Ցինչ վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս (Թ 32):

3. Եւ նա ասաց. « .... Աղը լաւ բան է. բայց եթէ աղը անհամանայ, ինչո՞վ պիտի համեմուի. արդ, դուք ձեր մէջ ունեցէք աղը եւ իրար հետ խաղաղութեամբ ապրեցէ՛ք», Եւ նա ասէ, ... Բարւոք է աղ. եւ եթէ աղն անհամեսցի, ի՛ համեմեսցի. արդ դուք կալարուք յանձինս ձեր զաղն, եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս (Թ 8, 49):

Երկու ինչու-որ հարցումներից կազմված նախադասություններ

Մարկոսի Ավետարանում կա 10 երկու ինչու-որ հարցումներից կազմված երկբեւեռ հարցական նախադասություն:

Ահա այդ հարցական նախադասությունները.

ա) «Ինչ» եւ «ո՞վ» հարցական դերանուններով հարցումներ.

1. Օրէնսգէտներից մի քանիսը, որ նստած էին այնտեղ, իրենց մտքում խորհում էին. «Այս ինչ է խոսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերին թողութիւն տալ, եթէ ոչ՝ միայն Աստուած» - Եւ էին ոմանք ի դպրաց անտի որ անդ նստէին. եւ խորհէին ի սիրտս իւրեանց, Ինչ է այս որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած (Բ 6-7):

2. Նրանց ասաց. «Իսկ դուք ինչ էք ասում իմ մասին՝ ո՞վ եմ ես» - Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ» (Ը 29):

3. Եւ Յիսուս իր աշակերտների հետ միասին ելաւ գնաց Փիլիպպեան Կեսարիայի գիւղերը. եւ ճանապարհին աշակերտներին հարցնում էր եւ ասում. «Մարդիկ ինչ են ասում իմ մասին՝ ո՞վ եմ ես» - Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ, եւ ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն եւ ասէր, Զո՞ ուստեք ասեն զինէն մարդիկն թէ իցեմ (Ը 27):

4. Դարձեալ Երուսաղէմ եկան. եւ մինչ նա այնտեղ, տաճարում շրջում էր, նրա մօտ եկան քահանայապետները, օրէնսգէտները եւ ծերերը ու ասացին նրան. «Ինչ իշխանութեամբ ես դու այդ անում, եւ ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը» - Գան միւս անգամ յԵրուսաղէմ, եւ մինչդեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք: Եւ ասեն ցնա, որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ եր քեզ զի իշխանութիւնդ զայդ (ԺԱ 27-28):

բ) «Ինչ» եւ «ինչո՞ւ» հարցական դերանուններով հարցում.

1. Եւ այնտեղ կանգնածներից ոմանք ասացին նրանց. «Ինչ էք անում, ինչո՞ւ էք այդ աւանակն արձակում» - Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ցնոսա, Զի՞ գործէք զի լուծանէք զյաւանակդ (ԺԱ 5):

գ) «Ե՞րբ» եւ «ինչ» հարցական դերանուններով հարցում.

1. Եւ մինչ նստած էր նա Զիթենեաց լերան վրայ, տաճարի դիմաց, Պետրոսն ու Յակոբոսը եւ Յովհաննէսն ու Անդրեասը, առանձին, հարցրին նրան. «Ասա՛ մեզ, ե՞րբ պիտի լինի այդ, եւ ինչ կը լինի նշանը, երբ կատարուելու լինի այդ բոլորը» –

– Եւ մինչ նստէր նա ի լերինն Զիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս, Ասա մեզ ե՞րբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան է յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն (ԺԳ 3-4):

դ) «Ինչի՞» եւ «ինչ» հարցական դերանուններով հարցում.

1. Եւ ասում էր. «Ինչի՞ նմանեցնենք Աստծու արքայութիւնը կամ ինչ օրինակով ներկա-

յացնենք այն. նման է մանանեխի հատիկին, որը երբ սերմանուում է հողի մեջ, աւելի մանր է լինում, քան երկրի վրայ եղող բոլոր սերմերը. իսկ երբ սերմանուի, բուսնում եւ լինում է աւելի մեծ, քան ամէն տունկ, եւ արձակում է մեծ ճիւղեր, այնքան, որ երկնքի թռչունները նրա հովանու տակ կարող են բնակուել» - Եւ ասէր, ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա: Որպէս հատն մանանիտոյ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս որ են յերկրի, Եւ յորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինել ընդ հովհանեաւ նորա թռչնոց երկնից բնակել (Դ· 30-32):

ե) «Որտեղի՞ց» եւ «ի՞նչ» հարցական դերանուններով հարցումներ.

1. Երբ շաբաթ օր եղաւ, սկսեց ժողովարանում ուսուցանել. եւ շատերը, երբ լսում էին նրան, զարմանում էին նրա վարդապետութեան վրայ եւ ասում. «Այս բաները որտեղի՞ց են սրան, կամ ի՞նչ է այս իմաստութիւնը, որ տրուած է սրան, որ սրա ձեռքով այսպիսի զօրաւոր գործեր կատարուեն» - Եւ եղեւ ի շաբաթուն սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. եւ բազումք իբրեւ լսէին, զարմանային ընդ վարդապետութիւն նորա եւ ասէին, ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց սորա լինիցին (Զ 2):

զ) Երկու «ի՞նչ»-երով հարցում.

1. Եւ նա իր մօտ կանչելով ժողովրդին, աշակերտների հետ միասին, ասաց նրանց. « .... Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի, որովհետեւ մարդ ի՞նչ ունի տալու իր անձի փոխարեն» - Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա, ... Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցի. Քանզի զի՞նչ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ (Ը 34, 36-37):

է) Երկու «ե՞րբ»-ով հարցում.

1. Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Ո՛վ անհաւատ սերունդ, մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչեւ ե՞րբ ձեզ պիտի հանդուրժեմ. բերէ՛ք նրան ինձ մօտ» - Պատասխանի եւ նոցա եւ ասէ, ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անասայցեմ ձեզ. ածէք զնա առ իս (Թ· 18):

Այո - ոչ հարցումները Մատթեոսի Ավետարանում

Մատթէոսի Ավետարանում կա ընդհանուր առմամբ 31 **այո-ոչ** հարցում՝ 17-ը՝ մենաբեւեռ, 14-ը՝ բազմաբեւեռ, ընդ որում երկուսը բաղկացած են երկու **այո-ոչ** հարցումներից, իսկ 10-ը **ինչու-որ** եւ **այո-ոչ** հարցումներից, որոնցից երեքի կազմում կա մեկ **ինչու-որ** եւ մեկ **այո-ոչ** հարցում, մեկի կազմում՝ մեկ **ինչու-որ** եւ երեք **այո-ոչ** հարցում, իսկ մեկի կազմում՝ մեկ **ինչու-որ** եւ չորս **այո-ոչ** հարցում: